ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 22.02.2016թ. ԹԻՎ 121-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

20 հունիս 2016 թ,
ժամը 12:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ
Խ.Սիսակյան ՏՏԾ պետ
Հանձնաժողովի քարտուղար
Հ. Հակոբյան

Վ.Աղաջանյանը և Հ.Նիկողոսյանը չմասնակցեցին հանձնաժողովի նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՆ(1)-ԾՀԱՊՁԲ-15/8-16 ծածկագրով <<Սերվերների>> ապրանքախմբում ընդգրկված ապրանքատեսակների գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում և գնահատում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն՝

- <<Իքս-Արթ>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Սարյան 4-55)
- <<Լանս>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Կոմիտաս 49)

1. Ծրարները կազմելու և ներկայացնելու տվյալների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ ծրարները կազմված և ներկայացված են համապատասխան սահմանված կարգին:

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա էին սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պահանջներին: Հանձնաժողովի նախագահ Խ.Սիսակյանը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ 5 000 000 ՀՀ դրամ: Այնուհետև գնահատվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները: <<Իքս-Արթ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 5 994 697 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, բարձր էր նախահաշվային գնից: <<Լանս>> ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկն է՝ 4 992 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Սույն ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Լանս>> ՍՊԸ
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (նմանատիպ պայմանագիր), ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 29.06.2016թ. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Խ.Սիսակյան Հանձնաժողովի անդամ

Հ.Հակոբյան Հանձնաժողովի քարտուղար